

ի միւսն, իսկ Ղազար նախարարաց զերու-
թեան պատմութեան առթիւ յիշելով անոցմէ
զոմանս, յետոյ դրաւ նոցա ընդհանուր ցան-
կը: Այս բնական ընթացքն է պատմութեան:
ԺԳ. Ենթակալ պէտք է լինիմք՝ որ քըն-
նադատը վերջապէս կը խոստովանի մեր յո-
գուածոց «միակ արժանաւորութիւնը»՝ նը-
կատմամբ զրպարական Հետազոտութեանց
կատարման եւ կոնիքրի տպած Հատակտո-
րին: Թէ եւ ասոնք եւս ի բաժնատանաց
զերծ չեն. նախ՝ զի ցանկերը «ամբողջ ցու-
ցանկերի մէջ» արձանագրած չենք իւր ու-
զած ճապաղ ոճով, թէ եւ անոնց տառական
զանազանութիւնքն իսկ նշանակուած են ծա-
նոթութեամբ: Երկրորդ, զի մեր Հետազո-
տութիւնք «իրենց իսկական ծառայութիւնը
չեն կարողացել մատուցանել» մեզ. բոտ ու-
րում ցանկերու մասին երարկացուցեր եմք,
թէ որովհետեւ անոնք զրպարաց մէջ այլ-
այլաւ են, պէտք չէ Հիմուիւ տպագրաց
ներկայացուցած կարգի վերայ. եւ կոնիքրե-
րի Հատակտորին Համար, թէ որովհետեւ
նա մասամբ սխալ կարդացած է իւր զրպա-
գիրը եւ մասամբ խանգարուած է եղեր, պէտք
չէ վստահիլ անոր վերայ: Ասոնց Հակառակ
Հետեւութիւնքը քննադատին կը թողումը
Հանել:

ԺԴ. Չեմք ուզեր սակայն մոռանալ՝ թէ
նա ունի մի լուրջ փաստ եւս. այն է՝ «պէտք
է ջանայ մօտիկ ապագայում մասնանիչ ա-
նել մի գլխաւոր աղբիւր, — ոչ շատ ան-
յայտ եւ ոչ շատ յայտնի, — որից օգտուել
է Եղիշէի պատմութեան խմբագիրը»: Մեք
կը յուսամք տեսնել նա եւ այդ «ոչ շատ
անյայտ» աղբիւրը. թայց եւ վստահ եմք՝
որ Եղիշէի խնդրոյն Տէրպօղոսեանի փափա-
քանաց պէս լուծումն երբեք չպիտի դադա-
րի ունելէ զիւր «մօտիկ ապագայն»:

ԺԵ. Քննադատին ներկայ յօդուածին մէջ
ստեղծ յանդիմանուած է մեր մի գլխաւոր
թերութիւնը՝ ազգասիրութիւնը, որով չեմք
Հանդերձութեան յայտնուած տեսնել «զգարչե-
լիսն» Եղիշէի. եւ յաճախ տրուած է մեզ
նայնպիսի անախորժ Հոտերով զանգուած
խրատներ: Ար որ կը պատասխանենք. մեր
Հին մատենագրութենէն ո եւ է մի գործ քան-
դելով կամ արտաքերտով՝ յայտնի է թէ աղ-
քատուցուցած կը լինիմք զայն. եւ այդ աղ-
քատութիւնը մեր մարդկային բնական անձ-
նասիրութեան դէմ է: Մեք դեռ չեմք Հասած
այն գերբնական կատարելութեան, որով կա-
րենամք սառնութեամբ արՀամարհել մեր բո-
լոր սեպՀականութիւնքը. ուստի եւ պարտա-
ւոր կը զգամք զմեզ կանգուն բունել որ եւ է
գործ, ցորՀափ ունիմք ի ձեռին օրինաւոր

փաստեր ի նպատտ նորին: Ուրիշ բացատրու-
թեամբ՝ օովոր եմք նախ յարմար դատուած
սպեղանեօք մօտենալ Հիւանդին: Իսկ Տէր-
պօղոսեանի եւ նմանեաց ուղղութիւնն է տա-
պարով այցելել խոտացելոյն, եւ զայն քննիլէ
յառաջ սկսիլ անգամահատել, սպանել, ոչըն-
չացնել, ինչպէս փորձեց նա իւր դեռ առաջին
յօդուածով: Թող մեր ողջամիտ որեարք դատի՝
թէ այս երկու ընթացներէն որն է դատա-
պարտելի: Իսկ մեք կը կնքեմք մեր խօսքն
սու Տէրպօղոսեան, տալով իրեն մի բարե-
կամական խորՀուրդ, որ եթէ ճշմարտապէս
կը փափաքի օգտակար լինել գրականութեան,
... Հրաժարի քննադատութենէ: Ո՞ր Հարկ
կը ստիպէ ձեռնարկել այն բանին՝ որում
մարդ յարմարութիւն չունի:

Հացոռնի



ՎԱՆԱՅ ԵՌՎԱՆԻ ԿՂԶԻՆԵՐԸ

ԱՂԹԱՄԱՐ

(Հարբ. տիս յէջ 411)



ԵՐ Թէոդորոս Ա. Հայրապետէն վերջ
Մամուէ Անեցին Զո (940) Թուին
իբրեւ կաթողիկոս կը յիշէ. «Տէր Եղիա-
սան Ե¹». Եւ անմիջապէս վերջը կը դնէ
ԶոԱ (941) տարեթիւն ու կը յաւելու. «Ի
Տէր Եղիայէն էառ զԱղթամար Գաղիկ
եւս նմա զիլի, շինեաց եւ կատարեաց անդ
զեկեղեցին»: Անեցւոյն աստ յիշած Թուա-
կանը բոլորովին Հակառակ կ'ենէլ Գաղիկայ
Աղթամար եկած Թուականին, եւ այս մի-
ջոցս բոտ պատմչաց Հայրապետական աթոռ
նաոեր է Տ. Թէոդորոսի եղբայրը Տ. Եղի-
շէ. Թէ եւ լուսաբանութեան, քննութեան եւ
եւ մեկնութեան կարօտ կը գտնենք Անեցւոյ
յիշած Թուականը, սակայն արդէն իսկ բա-
ւական երկարեցաւ մեր գրութիւնն, եւ ան-

1. Մամուէ Անեցի, 1893 Վաղարշապատ,
էջ 99:

ընդհատ քննութիւններով ընթերցողաց
ձանձրութիւն պատճառել ուզելով զգուշա-
նալ, դորա լուսաբանութիւնն և մեկնութիւնն
այլ կը թողումը հմտագունին և կամ ուրիշ
ազմի: Տէր Եղիշէն վերջ, Աղթամարայ կա-
թողիկոսական տնօրէն կը նստի Վարազայ
ուխտին առաջնորդ Անանիա Մոկացին, որ
ամբողջ Խ տարի Հայրապետութիւն բրած
է, նստելով Ե տարի յԱղթամար և միւս փէ
տարիները ի Վարազ և յԱնի: Տ. Անանիա
ի Վասպուրական գրած է իւր առաջին կոն-
գակն առ Սահակ կաթողիկոսն Աղուանից,
հաւանութեամբ և խորհրդով Գաղիկ արծ-
րունի թագաւորի: Գաղիկայ յաջորդի Դերեն-
կան թագաւորութեան առաջին տարին Ա-
նանիա կը թողու Վասպուրականը, կ'երթայ
դէպ ի Սիւնեաց աշխարհը և անտի կ'անցնի
Շիրակ և անդ կը մնայ մինչև իւր մահը:
Սա իւր երկրաւոր կեանքը կ'ընելէ առաջ
ըստ աւանդելոյ Ուտահեցոյն, կը յանձնէ Ի-
րեն յաջորդ նստեցընել զՎահակ կամ Վա-
հանիկ արքեպիսկոպոսը որ էր Սիւնեաց
Բաղաց գաւառէն: Տէր Անանիայի մահէն
վերջ ազգային մեծ ժողով կը գումարուի
յԱնի, ներկայութեամբ Աղուանից Յովհան-
նէս Հայրապետի. բոլոր ժողովականաց հա-
ւանութեամբ կ'ընտրուի վերոյիշեալ Վահանը
և կը նստի յԱղթամար: Հազիւ քանի մը տա-
րի ուղղափառ վարդապետութեամբ և միա-
բանասէր հոգւով կը կատարէ իրեն վիճա-
կուած սրբազան և բարձր պաշտօնը, նա-
խանձորդ, խանակիչ և ապիրատ անձանց
ոմանց պատճառաւ եկեղեցական երկպառա-
կիչ խնդիր մը կ'սկսի ծագել յԱրարատ, խա-
ղապասէր Բագրատունի Աշոտ Գ. թագաւորի
ժամանակ: Գլխաւոր այս խռովութեան իբրեւ
պատճառ կը համարուի Տ. Վահան Հայրա-
պետի ֆաղկեպոնի սուրբ ժողովոյն ընդու-
նենը և Յունաց ու Վրաց հետ թղթով միա-
բանութիւն հաստատելը: Աշոտ թագաւորն
տեսնելով որ խառնակութիւններն երթալով
պիտի շառնան, և մեր աշխարհը թէ նիւ-
թական և թէ բարոյական փնասուց ենթա-
կայ պիտի լինի, հրաման կը հանէ ազգային
եկեղեցական ժողով մը գումարել յԱնի և
վտանգ սպառնացող խռովութեանց դիմացն

անել: Փութով ժողովը կը գումարուի և
բազմաթիւ եպիսկոպոսներ և կրօնաւորներ
քննութեան առնելով Վահան Հայրապետի
թղթերն և գործերը, յայտնի կը տեսնեն որ
ստուգիւ նա միաբանած է Յունաց և Վրաց
հետ. ասով ժողովոյն մէջ երկպառակութիւն
կ'իյնայ: Յետ երկար վիճմանց, ժողովոյն
հակառակորդ մասը կը մտածէ զահլնկէց
ընել զՏէր Վահան, սակայն ժիւր և արթուն
սուրբ Հայրապետը, կանխաւ իմանալով շա-
րաց և հակառակորդաց խորհուրդը, ինքնին
կը թողու Հայրապետական դահը և խոյս
կու տայ դէպ ի Վասպուրական: Ճիշդ նոյն
ժամանակ Վասպուրականի թագաւորն էր Ա-
բուսահը Համազասպ, առ որ գիտելով Վահան
Հայրապետն և յայտնելով իւր ուղղափառու-
թիւնը մեծ ընդունելութիւն և սէր կը գտնէ:
Որոշ չի գիտցուիր թէ Վահան նստած ըլլայ
յԱղթամար, մանաւանդ որ Սամուէլ Անե-
ցոյ տապաքեալ օրինակն գնելով թէ «Վա-
հանիկն կենդանի էր ի Վասպուրական ի
Զորավանդ¹» և Վարդան Պատմիչ. «Վա-
հանիկ կաթողիկոս եկն առ Աբուսահը որդի
Գագիկայ ի Զորավանդ՝ և անդ վախճանե-
ցաւ²», մեզ հաստատապէս կ'երաշխաւորեն
որ նստած է Զորավանդի մէջ և անդ վախ-
ճանած: Երբ Վահան Արարատայ Հայրապե-
տական դահը թափուր թողած փախաւ առ
արծրունի թագաւորն, նոյն Անեց չարածո-
ղովը, Վահանայ հակաթոռ ընտրեց Ստե-
փանոս Գ.ը Սեանայ վանահայրը, որ գահը
նստելուն պէս նգովը զրկեց առ Վահան և
առ արքայն Աբուսահը. ասոր վրայ Վահան
այլ նգովեց զՍտեփանոս և նորին համա-
խոհները, և այս կերպով շարունակ երկու
կողմէն ևս անպակաս էին նգովները:

Այս ժամանակները, ըստ Ասողկանց³,
Հայոց արեւմտեան կողմը հովուող Սոսկա-

1. Սամուէլ Անեցի, 1893 Վաղարշապատ, էջ 101:

2. Վարդան Պատմիչ, 1862 Վենետիկ, էջ 116:

3. Ստեփանոս Ասողկանց, 1859 տպ. Շահում-
շարեանցի, էջ 168:

նա¹ վարդապետն մեծ, որ էր յաւտիման երանելոյն Մեսրոպայ, կը ժողլէ բազմաթիւ կրօնատերեր Տարօն, Հաշտեանը, Ծոփք, Խորձեանի և այլ գաւառներէ, և Մովսէս վարդապետի և Բարդէն սրննեցոյ հետ կու գայ ի վասպուրական ի յանդիմանորիս վաճառայ և Արուսեակի: Իսկ թագաւորն և հայրապետ և ոչ իրենց առջին ելնելու կ'արժանացընեն և կը հրամայեն ու կ'աքսորեն զամենքը յԱղթամար: Այս ժամանակ կ'երևի Աղթամարը սկսեք է կորսնցընել իւր առաջին փայլուն դիրքն, այլ ևս նա ոչ թուի մայրաքաղաք Արծրունեաց, և Արուսեակ թագաւորը այդ միջոց անշուշտ կը բնակէր յՈւսան և կամ ի Վան, և Վահան հայրապետն այլ ինչպէս վերը տեսանք ի Զորոյ վանս: Սակայն եթէ ոչ մայրաքաղաքի, գէթ ամուր քաղաքի մը ամենայն յատկութիւնքն աակաւին ունէր, և այդ պատճառաւ այլ, իբրև ամուր վայր, անոյր կ'աքսորուի վերոյիշեալ կրօնաւորաց խումբը: Այս աքսորականք երկար ժամանակ չեն մնար յԱղթամար, այլ նոցա մեծագոյն մասը խոնարհելով և թողուլին խորհելով Վահան հայրապետէն և Արուսեակ արքայէն, նոցին հրամանաւ կ'արձակուին իրենց երկիրները, մանաւանդ Մովսէս վարդապետը և Բարդէն սրննեցին. իսկ ասոնց պարագլուխը Ստեփանոս վարդապետը կը տանին կը փակեն վասպուրականի Արձախիձոր գաւառի կոտոր կամ Կոտորոց բերդը, ուր կը մենին նոյն տարին: Ազգային պատմիչներն չիրակոս Գանձակեցի և Ստեփանոս Ասողիկ կ'աւանդեն որ Վահան և Ստեփանոս կաթողիկոս սունգ մի և նոյն տարւոյ մէջ վախճանեցան և մեր աշխարհը տարի մը մնաց առանց հօսիւսպետի, մինչև Աշոտ Գ Ողորմածի հրամանով Անույ Գ Ժողովը կը զուարթուի և կ'ընտրուի Արշարունեաց Խաչիկ եպիսկոպոսը, վերոյիշեալ Անանիա կաթողիկոսի քեւ-

որդին, և կը նստի ու կը վախճանի յԱրգիսա: Տէր Վահան կաթողիկոսի կենաց վերջին տարիները և կամ նորա մահէն վերջ, կը վախճանի նաև վասպուրականի Արուսեակ Համազասպ թագաւորը, որոյ յաջորդեց անդրեանի որդին Աշոտ Սունգ, թագաւորով բովանդակ վասպուրականի վերայ, իսկ միւս որդիքն Գուրգէն և Սննեքերիմ իշխեցին մին Անձևացեաց գաւառին և միւսն Ռշտունեաց: Արուսեակ արքայի որդւոց ժամանակ, որոց վերայ գովութեամբ կը խօսի սուրբ Գրիգոր Նարեկացի, ամենեկին մեր պատմիչներն ղեպք մը չեն յիշեր Աղթամարայ վրայ, նոյնպիսի լուսկեամբ կ'անցնի նաև նոյն կղզւոյ վանքի կոնդակագիրն սոյն ժամանակիս ղեպքերու նկատմամբ: Այդ պատճառաւ մենք այլ յոչնչէ բան մը յառաջ բերելու յուսով ի զուր չցննենք պատմութեանց էջերն և ժամանակ չվատնենք, այլ մի և նոյն ոճով յառաջ տանինք մեր գրուածին ընթացքը: Ինչպէս կ'երևի վերոյիշեալ Արծրունիքի որդւոց ժամանակ նշանաւոր ինչ չէ հանդիպած Աղթամարայ, և կամ եթէ հանդիպած է, ի գիր չարձանաւ գրուելով մնացեք է անյայտ: Բայց մենք չենք սխալեր եթէ բսնք թէ Աղթամարը ինչպէս Արծրունեաց թագաւորաց սկիզբը, նոյնպէս և նոցա թողանց ժամանակ, երբ գաւառն ալլազգի ամիրաներ կ'արշաւէին մեր աշխարհը, միշտ եղած է ամուր ապաստան և անդիմադրելի պատուար ընդդէմ թշնամեաց, թէ Արծրունեաց պատմիչ շարունակողը և թէ Աղթամարայ կոնդակագիրն, վասպուրական Սննեքերիմ արծրունի արքայէ ձեռնորով Յունաց Վասիլ կայսեր անցնել վերջ միայն կ'սկսին խօսիլ Աղթամարայ վրայ, անկէց առաջ կատարեալ լուսկին կը պահեն: Ընդդէմ այդ ժամանակները զազանամիտ և արբւնարարա Ելիմացոց ազգը իրենց Տուղլոսփ անուն ռապաւանի հետ կ'արշաւեն մեր աշխարհի մէկ ծայրէն մէկալը. Բագրատունեաց հրաշակաւորոց մայրաքաղաքն Անի, քիչ առանց աներակաց և դիակաց կոյտ մը կը դառնայ, այնչափ սաստիկ կը լինի կոտորածը, որ ըստ աւանդելոյ ականատեսից կ'ըսէ թովմա Արծրունի « . . . զաղայս

1. Մեծ. հ. Միքայէլ վ. Չամչեան իւր պատմութեան Բ հատորի 841 էջը, ունի այս վասպուրական եկող Ստեփանոս վարդապետը կը շփոթի ընդ Ստեփանոս Գ հակաթոռ կաթողիկոսի:

գիացիկս թաւալ տալով արեանն ի գետն հասուցանէր, որ անցանէր ընդ գունն քաղաքին»։ Այսօրինակ շարաշուք աւերմունքներէ զերծ չմաց նաև Վասպուրականը։ Տուրլուխի արբանակներէն Մարահայկ անուն ոմն արեւմարդու և ժանդ, կ'առաջնորդէ աւորէն գազանաց խմբերու, որք արշաւելով աւերեցին, կործանեցին, մոխիր դարձուցին Վասպուրականի մեծագոյն մասը, Վան և Արմէշ քաղաքներն այլ պաշարելով սրէ կ'անցրենք բոլոր բնակիչներն և բնակութիւնը յետ կողապտտի ի հուր կը մշակեն։ Քրիստոնէից համար ապաստանի ուրիշ տեղ չի մնար բաց ի անմատոյց Ամիկ ամրոցէն և մեզ քաջաժանօթ Աղթամարէն, որ ոչ միայն պարսպաւէր էր խրոխտացեալ կոհակօք, այլ և գեռ կանգուն էին և ամուր իւր պարիսպները, ինչպէս աւանդէ և կոնդակագիրն. «պարիսպն ամուր էր չկարաց աճող»։ Այս կոնանաշփոխ և աղետալի ժամանակ աստուածային անսահման և անհուն ողորմութիւնն, բոլորովին անտէր չի թողուր մեր հայրենի աշխարհը։ Աղթամարայ և Ամիկ ամրոցի վերակացու և իշխան կը լինէ Աբղմանէ անուամբ մէկը, որ տոհմակից էր Արծրունի Սենեքերիմ թագաւորի։ Գեղեցիկ կերպով Արծրունեաց պատմիչը շարունակողը, զսակը նմացրէ, իբրեւ ի հոյ փայլատականց մնացած կայծի մը, զոր Աստուած անվտանգ պահեց յայսմ ծովածովի վտանգաւոր աշխարհումս և անսահման և հանգոյն Նոյի, Աբահամու և Դավիթ օրհնեց զինքը և իւր որդիքը, որք պիտի լինէին իրենց նախնաց պէս, Վասպուրականի թէ՛ քաղաքական և թէ՛ հոգեօրական իշխանութիւնաց գլուխներ։

Սա է յառաջագոյն մեզ ծանօթացած պրոտոկոլապաղատ կողմէն Աբղմանէն, որդի թոռնիկ անուն մեծ իշխանին և սուրբ Մարտիրոսին, որ փրկիչ ծննդեան և մկրտութեան տօնի օրը, բազմաթիւ ընտիր արանց հետ մարտիրոսութեան պսակն առնելու արժանացաւ, Մովսէս Արծրունի գիւլի մէջ։ Աբղմանէ իշխանն ինչպէս կը նշանակէ պատմիչն սբութեան և իմաստութեան ամենայն առաքինութեամբք օժտուած էր, և անձամբ այլ մեծաշուք, բարձրահասակ, գանգրահեր

և գեղեցկատեսիլ, քաղցրախօս և անուշաբարբառ։ Սա իրեն ամուսին կ'առնէ Գրիգորի արեւելեան դքսի զուտորը և մեծաշուք տիեզերակալ իշխանաց իշխանի Ալուզի թոռը։ Աստ մեր յիշած Ալուզ իշխանն և Գրիգոր ժն դարու կիսէն վերջ կ'իշխէին Մարդկոտն և Կոգովիտ գաւառաց և մեծ աւանին Անգեղտան։ Ինչպէս Աբղմանէն նոյնպէս և նորա տիկինն Մարիամ, ի մանկութենէ սնած էր սրբութեամբ և աստուածապաշտութեամբ, զթած էր առ ամենեւին և այդ պատճառաւ այլ սիրելի ամենեցուն։ Սոյն այս Արծրունի Աբղմանէ, որ երբեմն կոչուպաղատ կոչուած է և երբեմն արքայ, հաւանականաբար կը բնակէր Աղթամար ինչպէս նաև իւր ամուսինը, ըստ աւանդելոյ շարունակողին թոմայի և ըստ կոնդակագիրի։

Աբղմանի իշխանութեան ժամանակ բոլորովին տակն ու վրայ եղաւ ոչ միայն մեր աշխարհը, այլ գրեթէ երկրագնդոյն մեծագոյն մասը, ամեն տեղ անպակաս էին որաժութիւնք, սուրբ, սասանութիւնք և ուրիշ անասելի թշուառութեանց և աղետից տեսակներ։ Նոյն ժամանակները Երուսաղէմ խաչակրաց բանակներ, հանդերձ մեծամեծ կարաւաններով գացին անօրինաց ձեռքէն ազատեցին սուրբ քաղաքն Երուսաղէմ, և այդ պատճառաւ այլազանց բոլորեանութեան և ատելութեան չափ չմնաց ընդդէմ Քրիստոսնէից։ Իրենց բոլոր վրէժը և զայրոյթը սկսան առնուլ արեւելեան ճրիստոնեայ փոքրիկ ազգերէ, մասաւաւոր միշտ աղետից ենթակայ մեր թշուառ աշխարհէն։ Այս խեղճութեանց վերայ գաղափար մ'առնելու նպատակաւ կարգանք թոմայի շարունակողի հետեան ի տողերի։ «Տաքնալը բրկերի արեւելայցի է ձեռաց անօրինաց, յարձակման յարժամ այլազգեաց, որ իբրեւ զյորձանս հեղեղաց յարձակէին ընդ երեսս երկրի, կամ իբրեւ զամպս սաստիկս ի ճայթմանէ օգոց, և ի փայլատակմանց հոյ ի ժամու մթացեալ գիշերոյ, եղև փախուստն մեր ի ձմրայնի և յաւուր շարաթու, ըստ տքունական հրաձանին, և ոչ գտանք յոյս և ակնկալութիւն ճրիստոնէի արքայն պոտոկոլապաղատն»։

Մինչդեռ այսպէս մեր աշխարհն ականակիտ վտակներն կը դառնային արեան հեղեղներ, մինչդեռ սրբաւայրեր կը քանդուէին, և սըրբութիւնք կը պղծուէին, մինչդեռ հրախառն ծիսոյ սիններ հայրենեաց աւերակաց վրայէն յօլս կը բարձրանային, միով բանիւ մինչդեռ մեր անտէր բնագաւառը մատնուած կը թուէր թէ բարոյական և թէ նիւթական կորստեան, արիասիրտ Արդմանհը քաշուած Աղթամարայ տաճարի մէջ անդադար կ'աղօթէր իւր աշխարհի փրկութեան համար. և օժանդակութեամբ աղօթից և խղրուածոց իւր ազգակցացը և սրբասէր հարցը, զօրացած տեքամբ, կը ջանայր ամենուն հետ խաղաղութեամբ վարուելու. իւր ստացուածքն և կենսոնքն անգամ դրած էր ի փրկութիւն ժողովրդեան և յանդորութիւն աշխարհին. քմենուն իբրև զթած հայր մը կը զթար և զամենքն կ'սփոփէր:

Արդմանհը կ'ոճենայ եօթը ուստր և հինգ դուստր, որոնք իրեն և ամուսնոյն մեծ մխթարութեան և ցնծութեան առիթ կը լինին. ոմանք հոգեւորական և ոմանք այլ աշխարհական բարձր պաշտօններ վարելով ի վասպուրական, այս մեր ըսածին կը վկայէ նաև կանգալագիրն ըսելով. «Եւ տեսին զորդին որդւոց իւրեանց կաթողիկոս և իշխան զպարոն Սէֆէղին, զՎուրջիւղէկ. Եւ հասեալ ի բարիւր ծերութիւն հանգեան ի Քրիստոսս որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, և լի բերանով Առտուած ողորմի ասացէր նոցա առ հասարակ. ամէն»։ Թոմաս Արծրունւոյ շարունակողը կը յիշէ նաև ԱրուսաՀի մահուան թուականն և ուր թաղուին այսպէս. հայկական ԾՀ (= 1121) թուին ծերացած և բարի մահուամբ վախճանեցաւ և թաղուեցաւ «... ի նոյն աստուածաբանակ կղզւոյն Աղթամար ի զուռն սուրբ Խաչին»։ Եւ սըրբաւանալ ամուսինն Մարիամ երկու տարի վերջ ևսնելով կ'ամփոփուի յԱղթամար նոյն տապանի մէջ:

ԱրուսաՀի կենդանութեան ժամանակ իւր որդւոց անդրանիկը Դաւիթ, աստուածային առատազեղ շնորհօք լեցուած, և սրբութեամբ ու կուսութեամբ նմանելով բազմաթիւ սրբոց, ինչպէս մեզ կ'աւանդէ պատմիչն կ'արժանա-

նայ քահանայութեան, եպիսկոպոսութեան, արհի եպիսկոպոսութեան և մինչև անգամ կաթողիկոսութեան բարձր աստիճանին «... Եւ նստոյց զնա (զՏ. Դաւիթ) յաթոռ մերոյ սուրբ Լուսաւորչին սրբոյն Գրիգորի, և խառնեաց զնա ի կարգ սուրբ հարցն առաջնոց, սրբոցն Ռատակիսի, Վրթանիսի, Յուսկանի, Գրիգորիսի, Ներսիսի և Սահաւայ»։ Թէ՛ Աղթամարայ կոնդակէն և թէ արդէն մեր հրատարակած նոյն կղզւոյ կաթողիկոսաց շարքէն կը տեղեկանամք որ սոյն այս Տ. Դաւիթը, ձեռնադրուած է կաթողիկոս ի սրբոյն Գրիգորէ Նարեկացւոյ (?) Նիսի (= 993) թուին, սակայն մեզ շատ նորոգիմակ կը թուի այս, մանաւանդ թէ անհիշող և հնարուած պատմութիւն, քանի որ վերոյիշեալ երկու աղբիւրներէն զատ, չունինք այս իրողութեան ստուգութեան երաշխաւոր պատմիչ մը: Որովհետև ազգային պատմաց վարդապետ և կիրակասի աւանդածներուն վրայ հիմնուած մեր վերջին և ներկայ դաւուրց պատմագիրք և հիգինակը, Աղթամարայ առաջին և պատմամբ կաթողիկոս կը համարին սոյն այս Տ. Դաւիթը, որուն թոռնէկեան պապական ազգանունը կու տան, ասոր ցեղաբանութիւնը Արծրունեաց պատմիչ շարունակողի համեմատ աստ յիշելը կարելւոր կը համարիմ, որ սկսելով Սնեքերիմ թագաւորի ազգակից Խեղեռնիկ իշխանէն հետեալ կերպով կը հիւղաւորի.

Թոռնիկ

Թաղէոս

Թոռնիկ

Արդմանհ

Տ. Դաւիթ Ստեփանոս կամ Աւուզ, են:

Մինչև Դաւիթ Թոռնիկեանի ժամանակ, հաւանականապէս, ինչպէս գրուած է և ի կոնդակին, Դաւիթ արծրունւոյ թագաւորութեան տարիներէն սկսեալ, նստած են

յԱղթամար անանձին կաթողիկոսունք. բայց թուի թէ ըստ ասից հեղինակաւոր անձի մը, այդ կաթողիկոսունք բոլորովին ինքնազուլիս և ազատ չէին, այլ Հայաստանը իրեն ընդհանուր հայրապետները ունեցած առին, միշտ էին ընդ հնազանդութեամբ և իշխանութեամբ նոցին : Սակայն երբ Գրիգոր վկայաւորը քառամեայ բովանդակ մեր աշխարհի հայրապետ կ'ընտրուի, այն ժամանակ Աղթամարայ Տ. Դաւիթ արքեպիսկոպոսը, պատճառ բերելով նորրինձայ կաթողիկոսի անկատար հասակը, և շատ մը սբրբազան մասունք ս. Լուսաւորչի (ինչպէս քօզ, գաւազան, և այլն), և Հովփսիմեայ Նշխարք, որ միշտ կաթողիկոսի քով կը պահուէին, հոն յԱղթամար պահուեին¹, կ'ուզէ ինքն լինել ընդհանուր հայրապետ, բայց այդ նպատակին չհասնելով, գլուխ կը քաշէ և իւր եպիսկոպոսներէ կ'օծուի կաթողիկոս, ոչ թէ միայն տեղական աթոռոյն, այլ գուցէ և բոլոր Հայոցն : Եւ ահա այս պատճառաւ ապստամբ կը համարուի Աղթամարայ աթոռը և նոյնից և կապանաց տակ կ'ինկնայ Սեաւ-Լերին ժողովովը. թէպէտ և վերջոյ կ'ազատի ի կապանաց 1290—95ին Հեթում Բ թագաւորի և Տ. Ստեփանոս Դ կամ նոր յաջորդ Տ. Գրիգոր Է ի ժամանակ : Աղթամարայ ի նոյնից ազատուելու մասին առիթ կ'ունենանք ուրիշ անգամ այլ խօսել գրուածքիս կարգին մէջ : Աստ արժան կը համարիմ յաւելուլ, որ որչափ որ Աղթամարայ Դաւիթ Թոռնիկեան կաթողիկոսը,

ոմանք կը համարին մեր աստ յիշած Աղթամանի որդի Տ. Դաւիթը, սակայն հաւանականագոյն և ըստ ժամանակագրութեան ճիշդ կը թուի մեզ համարել, մեր հրատարակած կաթողիկոսաց շարքի մէջ յիշուած 24 երրորդ Տ. Դաւիթը :

Շարայաբեյի

— 2 —

ԱՆԱԿՆԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ

ԵՒ ԱՆԱԿՆԿԱՆ ՀԱՆԳՆԻՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ծանօթ պարագայից առթիւ բռնադատեալ լինելով ծննդավայրէս հեռու պանդխտութեամբ անցրնելու ժամանակ, սարսույս օգոստոս ամսոյն սաք օրերէն մէկը Աւտար-խտալական սահմանագծի Պոնտէքրա կայարանին մաքսատան սովորական արարողութիւններէն ազատելով՝ դիշեր ատեն հասայ սահմանադիւի մերձաւորագոյն Ուզինէ քաղաքը, որ Ֆրիւլի նահանգին կեդրոնն է՝ 35,000 բնակչօք : Երկար ճամբորդութենէ պատճառաւ յոյնածովիւնս փութացուց իս փոքրիկ քաղաքին ընտրեալագոյն իջեաններէն միոյն՝ Սաւոյիոյ-խալին (Croce di Savioia) սենեկի մը և անկողնոյ հանգստեան վայելքը ձեռք բերելու. ուստի քաղցա յագեցնելով՝ փակեցի աչքերս քաղցր քնով, իբր ի վրէժ նախընթաց գիշերուան յոգեկանաց մէջ անցուցած առածանելի ժամերուս :

Կանխիկ հաստատուած կարգապահութեան համեմատ՝ սենեկապանս արթննցուց զիս կանուխ առաւօտուն, որպէս զի շոգեկանաց մեկնելու ժամուն պատրաստ լինելով՝ շարու նակիմ՝ ճանապարհս դէպ ի վնեռնիկ վնեռնեկոյ գեղարուեստից ցուցահանդիսին առթիւ՝ իտալական երկաթուղեաց ընկերութիւն իւր երթևեկաքն ուղեւորսներու զինք գրեթէ կէս ի կէս իջուցեր էր, հինգ օրուան ժամանակամիջոց շնորհելով վերսկիւնս ցուցա-

1. Վարդան պատմիչ, 1862. Վնենիակ, յէջն 116 յետ պատմելու Վահան կաթողիկոսի մահն ի Զորոյ վանս կը յաւելու « Եւ կայր անդ սեղան պատարագի սրբոյն Գրիգորի, և գաւազանին և օտին մաշկեղէն, և հողաթափ սրբոյն Հովփսիմեայ և պերեգոսն ներկեալ արեամբ, և զշղարչն՝ որ է դատաւաակ, մնացեալ անդ ի ժառանգաւորաց. և ի ժամանակ հալածանացն սմբաբաւ ի կղզին Աղթամարայ » : Մենք յառաջագոյն տեսանք որ երբ Տ. Գեորգ հայրապետն յԱրարատայ եկաւ ի Վասպուրական ընդ իւր բերաւ այս սրբազան Նշխարաց մէկ մասը, և ընծայեց Գագայիս արքայի, բայց թէ երբ դրուեցան ի Զորոյ վանս, այդ կը մնայ անայստ :